Հավելված 1

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկման դրված
ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ
նախագծի վերաբերյալ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված
առարկությունների և առաջարկությունների

Հ/հ	Առարկության և (կամ) առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը և համարը	Առարկության և (կամ) առաջարկության ամփոփ բովանդակությունը	Առարկության և (կամ) առաջարկության վերաբերյալ համայնքի ղեկավարի եզրակացությունը	Նախագծում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը
	1	2	3	4
1.	___	___	___	___
2.	___	___	___	___
3.	___	___	___	___
4.	___	___	___	___
5.	___	___	___	___

Հավելված 2

ՏԵՂԵԿԱՆՔ

ՏԻՄ-երի 2019 թվականի Տարեկան աշխատանքային պլանի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների մասին

Հ/հ	Տեղեկատվության բնույթը	Տեղեկատվության բովանդակությունը
1.	Տեղեկանքի վերնագիրը	ՏԵՂԵԿԱՆՔ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
2.	Հանրությանը իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի վերաբերյալ իրազեկումը	Հանրային քննարկումների վերաբերյալ հանրության իրազեկումը կատարվել է հայտարարությամբ, որը փակցվել է համայնքի տարածքում առկա ցուցատախտակներին, տեղադրել է համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ byureghavan-kotayq.am, ինչպես նաև Բյուրեղավանի համայնքապետարանի facebook-յան էջում:
3.	Հանրային քննարկումների մասնակիցները	➢ Հանրային քննարկումներին մասնակցել են Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալը, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերի վարչական ղեկավարները, համայնքի ղեկավարի խորհրդականը, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներ, համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամներ, շենքերի լիազորներ, բնակիչներ՝ 50 մասնակից (Բյուրեղավան բնակավայրում՝ 26, Նուռնուսում՝ 16, Ջրաբերում՝ 8 մասնակից):
4.	Հանրային քննարկումներին մասնակցության արդյունքները	Որոշեցին՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծին հավանություն տալ և գնահատել դրական:
5.	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հունիսի 2019 թվականի N 39-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ և 30-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 16-ի N30 եզրակացությունն ու «ԿԱՊԵԼՈ ԲԻԱՆԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը՝ ավագանին որոշում է.

1.«ԿԱՊԵԼՈ ԲԻԱՆԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Զրաբեր գյուղի 07-055-0212-0091 ծածկագրով (վկայական N 15022019-07-0002) 0.73 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2.«ԿԱՊԵԼՈ ԲԻԱՆԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Բյուրեղավանի համայնքապետարանի 900105226170 հաշվեհամարին վճարել 2.126.600 (երկու միլիոն հարյուր քսանվեց հազար վեց հարյուր) դրամ՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության համար: